ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# ՀՀ 2019Թ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ



# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

| | |
|---|---|
| Ախտորոշում | Հիմնված են նախորդ ժամանակահատվածի վիճակագրության վրա<br><br>Հաշվի չեն առնված փոփոխված իրավիճակի հնարավոր ազդեցությունները<br><br>1 շնչին ընկնող ՀՆԱ-ի 2018թ. սպասվող $4280 և 2019թ.  $4604 չափը ԵՐԱԶԱՆՔԻ ցուցանիշ չէ<br><br>Մեր երկրում արդյունքի ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ հեռու է կատարելությունից՝ հաշվի առնելով աղքատության առկա մակարդակը |
| Լուծում | Տնտեսական քաղաքականության վեկտորի հստակ նախանշում՝ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱՀԱՆԵԼԻ ՃՅՈՒՂԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ |

# ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| | |
|---|---|
| Ախտորոշում | Կանխատեսումների հիմքը նախորդ ժամանակահատվածի վիճակագրությունն է |
| | Հաշվի չեն առնված հարկային համակարգի փոփոխության քննարկումների նախնական արդյունքները |
| | Հարկային համակարգը բավարար պարզ և կայուն չէ |
| Լուծում | Հարկային համակարգի վերանայում՝ ՊԱՐԶԵՑՈՒՄ, ԳՈՐԾԱՐԱՐ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԱՃ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆՍ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ |

# ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

| | |
|---|---|
| Ախտորոշում | Օրենսդրական կարգավորումներով սահմանված պարտավորություններ<br><br>Անարդյունավետ՝ ուռճացած և դանդաղաշարժ պետական կառավարման համակարգ<br><br>Պետական կառավարման համակարգին զուգահեռ «կառավարման համակարգերի» առկայություն՝ հիմնադրամներ, ՊՈԱԿ-ներ, ԾԻԳ-եր …<br><br>Վարձատրության համակարգից դժգոհություն |
| Լուծում | Կառավարման համակարգի կառուցվածքի վերանայում՝ Չհիմնավորված կառույցների գործունեության դադարեցում և վարձատրության համարժեք համակարգի ներդրում |



# ԻՆՉՈՒ՞ ԿԱՆԽԱՏԵՍԵԼ

## Գնահատելու համար.

1. Տնտեսական միջավայրը, որտեղ տեղի են ունենալու բյուջետային գործառնությունները

- -Բյուջետային գործառնությունները նշանակալի կշիռ ունեն տնտեսության մեջ

- -Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը (արձագանքը) տնտեսության պահանջներին (կարիքներին)

2. Պետական կարիքները հոգալու (պաշտպանություն, սոցիալական և այլն) Կառավարություն ֆինանսական հնարավորությունները

# Տնտեսական աճն աշխարհում

**2019թ. սպասվում է համաշխարհային տնտեսության աճի կայունացում և գործընկեր երկրների աճերի որոշակի դանդաղում:**




| | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԵՄ | 2.1 | 1.7 | -0.4 | 0.3 | 1.7 | 2.4 | 1.8 | 2.4 | 2.2 | 1.9 |
| ՌԴ | 4.5 | 4.0 | 3.5 | 1.3 | 0.7 | -2.8 | 0 | 1.5 | 1.7 | 1.5 |
| Չինաստան | 10.6 | 9.5 | 7.9 | 7.8 | 7.3 | 6.9 | 6.7 | 6.9 | 6.6 | 6.4 |
| Աշխարհ (աջ առանցք) | 5.4 | 4.2 | 3.5 | 3.4 | 3.5 | 3.4 | 3.2 | 3.7 | 3.9 | 3.9 |

* ԱՄՀ՝ 2018 հուլիսի կանխատեսումներ

# Պղնձի համաշխարհային գների դինամիկան

## 2019 թվականին պղնձի գների նվազում է կանխատեսվում:



# Նավթի համաշխարհային գների դինամիկան

## Կանխատեսվում է, որ նավթի գները նույնպես նվազման միտում կունենան:



# 2018 թվականի ընթացիկ զարգացումներ. տնտեսական աճ

**2018թ. տնտեսությունում արձանագրվել է բարձր աճ, որը պայմանավորվել է հիմնականում ծառայությունների բարձր աճով: Մյուս ճյուղերը ևս նպաստել են աճին:**



# 2018 թվականի ընթացիկ զարգացումներ. տնտեսական ակտիվություն

**2018թ. տնտեսությունում արձանագրվել է սպասվածից բարձր աճ, ինչը պայմանավորվել է հիմնականում ծառայությունների բարձր աճով: Տնտեսության մյուս ճյուղերը (բացառությամբ՝ գյուղատնտեսության) նույնպես նպաստել են տնտեսական ակտիվությանը:**



# Տնտեսության ճյուղերի՝ ՀՆԱ-ի իրական աճին նպաստման չափերը, տոկոսային կետ

**Այս պայմաններում 2018թ. կանխատեսվում է 6.5% աճ, իսկ 2019թ.՝ 4.9%, որը կպայմանավորվի արդյունաբերության և ծառայությունների աճերով:**




| | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Զուտ անուղղակի հարկեր | 0.4 | 1.1 | 0.4 | 0.2 | -0.6 | -0.4 | 1.0 | 0.6 | 0.5 |
| Ծառայություններ | 1.8 | 2.4 | 1.4 | 2.9 | 0.7 | 1.5 | 6.0 | 4.0 | 2.5 |
| Շինարարություն | -2.1 | 0.6 | -0.9 | -0.5 | -0.3 | -1.3 | 0.2 | 0.5 | 0.4 |
| Գյուղատնտեսություն | 2.4 | 1.9 | 1.4 | 1.1 | 2.4 | -0.9 | -0.9 | 0.6 | 0.7 |
| Արդյունաբերություն | 2.1 | 1.1 | 1.0 | -0.1 | 1.0 | 1.2 | 1.2 | 0.9 | 0.8 |
| ՀՆԱ | 4.7 | 7.2 | 3.3 | 3.6 | 3.2 | 0.2 | 7.5 | 6.5 | 4.9 |

Արդյունաբերություն Գյուղատնտեսություն Շինարարություն
Ծառայություններ Զուտ անուղղակի հարկեր ՀՆԱ

# Ներուժային և փաստացի ՀՆԱ

**Կանխատեսվող աճերի պայմաններում 2018-2019 թթ. իրական ՀՆԱ-ի դրական ճեղքը աստիճանաբար կփակվի: Իսկ պոտենցիալ աճը փոքր-ինչ կարագանա՝ կազմելով 4.5-5 տոկոս նախկին 4-4.5 տոկոսի դիմաց:**



# 2019թ. հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա չեզոք է լինելու

**Կանխատեսվող շրջանում ՀՆԱ-ի ճեղքը փակվում է, որի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը չեզոք է՝ ուղղված մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունության պահպանմանը:**



# ՀՀ 2019թ պետական բյուջեի նախագծի առանձնահատկությունները

## ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- Կանոնների արդիականացված համակարգն ուղղված է արդյունավետ հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության համար հիմքերի ստեղծմանը, պետական պարտքի կայունացմանը և առավել ճկուն ուղենիշներ է պարունակում երկարաժամկետ տնտեսական աճը խթանող հարկաբյուջետային քաղաքականության համար:

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՁԵՎԱՉԱՓ

- բարելավել հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանումը և բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը, արդյունավետությունը և արդյունքայնությունը,
- բյուջետային տեղեկատվությունը ներկայացնել այնպիսի ձևաչափով, որը հնարավոր կդարձնի վերահսկել, թե ինչպես է բյուջեն օգտագործվում ընդունված քաղաքականություններն իրականացնելու համար,
- Փոփոխությունները ֆորմալ առումով ուղղված են ծրագրային դասակարգումը՝ որպես բյուջետային հատկացումների հիմնական դասակարգում սահմանելուն, բյուջետային գործընթացի բոլոր փուլերում (բյուջեի պլանավորում, կատարում, հաշվետվողականություն):

## ԱՐՏԱԲՅՈՒՋԵՆԵՐ

- Նախագծում ներառված են արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերը՝ շուրջ 28.0 մլրդ դրամի չափով

# Հարկաբյուջետային նոր կանոնները

**2019 թվականի հարկաբյուջետային շրջանակը կառուցվել է 2017 թվականին մշակված և 2018 թվականից ուժի մեջ մտած հարկաբյուջետային կանոնների արդիականացված համակարգի հիման վրա:**

| Պարտքի ռեժիմը | Նախկին կանոն | Պարտքի նոր կանոններ | Ծախսերի նոր կանոններ |
|---|---|---|---|
| **40% ≤ Պարտք/ՀՆԱ < 50%** | | | • Պետական բյուջեի կապիտալ ծախսերը պետք է մեծ լինեն պետական բյուջեի պակասուրդից |
| **50% ≤ Պարտք/ՀՆԱ < 60%** | • Պակասուրդը վերջին 3 տարիների միջին ՀՆԱ-ի 3%-ից ցածր | • Պարտավորություն ստանձնել պարտքի միջնաժամկետ հետագիծը նվազեցնել 50%-ից 5 տարիների ընթացքում, եթե չկան բացառիկ դեպքեր | • Կապիտալ ծախսեր > պակասուրդ<br>• Ընթացիկ ծախսերի աճը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին անվանական աճերով<br>• Սահմանափակումը չի կիրառվում, եթե կան բացառիկ դեպքեր |
| **Պարտք/ՀՆԱ ≥ 60%** | • Նոր պարտքի ներգրավման դադարեցում | • Պարտավորություն ստանձնել պարտքի միջնաժամկետ հետագիծը նվազեցնել 60%-ից 5 տարիների ընթացքում, եթե չկան բացառիկ դեպքեր<br>• Խիստ հաշվետվողականություն | • Կապիտալ ծախսեր > պակասուրդ<br>• Ընթացիկ ծախսերի աճը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին անվանական աճից առնվազն 0.5 %-ային կետով պակաս ճշգրտման գործակցով<br>• Ընթացիկ ծախսեր < հարկեր<br>• Սահմանափակումը չի կիրառվում, եթե կան բացառիկ դեպքեր |

# Հարկաբյուջետային նոր կանոններին համահունչ 2019թ. բյուջեով նպատակադրվել է պահպանել ոսկե կանոնները






# 2019թ. հարկեր/ՀՆԱ




| | 2015 | 2016 | 2017 | 2018* | 2019* |
|---|---|---|---|---|---|
| Հարկեր, մլրդ դրամ | 1067.9 | 1079.7 | 1158.0 | 1255.8 | 1399.2 |
| Հարկեր/ՀՆԱ,% | 21.2 | 21.3 | 20.8 | 20.3 | 20.7 |

# ՀՀ 2017-2019թթ պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները



# 2019թ պետական բյուջեի ֆինանսավորման արտաքին աղբյուրները



# Պակասուրդի ֆինանսավորում փոխառու միջոցների հաշվին

2019 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 225.1 մլրդ դրամ՝

- 70.0 մլրդ դրամ՝ պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին,
- 155.1 մլրդ դրամ՝ արտաքին վարկերի հաշվին:

Պետական գանձապետական պարտատոմսերի գծով նախատեսվում է տեղաբաշխել 183.2 մլրդ դրամի պարտատոմսեր, որից մուտքը կկազմի 183.7 մլրդ դրամ: Միաժամանակ կիրականացվի 113.7 մլրդ դրամի պարտատոմսերի մարում/հետգնում:

Նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 491.0 մլն ԱՄՆ դոլարի մասհանումներ և 176.8 մլն ԱՄՆ դոլարի մայր գումարի մարումներ: Ընդ որում մասհանումները կիրականացվեն՝

- 153.1 մլն ԱՄՆ դոլարը՝ բյուջետային աջակցության վարկերի գծով,
- 337.9 մլն ԱՄՆ դոլարը՝ նպատակային վարկային ծրագրերի գծով:

# Կառավարության պարտքի մարում և սպասարկում (1)

**2019 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 356.8 մլրդ դրամ, որից 199.2 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 157.6 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:**

| մլրդ դրամ | Մարում | Սպասարկում | Ընդամենը |
|---|---|---|---|
| Պետական գանձապետական պարտատոմսեր | 113.7 | 68.8 | 182.5 |
| Արտարժութային պետական պարտատոմսեր | - | 31.8 | 31.8 |
| Արտաքին վարկեր | 85.5 | 57.0 | 142.5 |
| **Ընդամենը** | **199.2** | **157.6** | **356.8** |



# Կառավարության պարտքի մարում և սպասարկում (2)

**2019թ. կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 5.2%:**

**Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը կկազմեն ՀՆԱ-ի 2.3%-ը և պետական բյուջեի ընդամենը ծախսերի 9.6%-ը:**

| | 2017թ. | 2018թ. | 2019թ. |
|---|---|---|---|
| **Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար)** | | | |
| մլրդ դրամ | 122.1 | 141.2 | 157.6 |
| %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ | 2.2 | 2.3 | 2.3 |
| %-ներով պետական բյուջեի ծախսերի նկատմամբ | 8.1 | 9.6 | 9.6 |
| **Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %** | 4.9 | 4.9 | 5.2 |

# ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

մլրդ. դրամ

| | 2016 | 2017 | 2018 | | | 2019 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| - | Փաստ | Փաստ | Բյուջե | ՄԺԾԾ (2019-2021) | Սպա-սում | ՄԺԾԾ (2019-2021) | Բյուջե |
| Ընդամենը եկամուտներ | 1'171 | 1'238 | 1'308 | 1'309 | 1'355 | 1'454 | 1'491 |
| ն.թ. Հարկային եկամուտներ | 1'080 | 1'158 | 1'249 | 1'249 | 1'256 | 1'392 | 1'399 |
| Պակասուրդի ֆինանսավորում | 278 | 267 | 157 | 157 | 103 | 151 | 152 |
| | | | | | | | |
| Ծախսեր (ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) | 1'449 | 1'505 | 1'465 | 1'466 | 1'458 | 1'605 | 1'642 |
| Ընթացիկ ծախսեր | 1'282 | 1'267 | 1'307 | 1'308 | 1'312 | 1'401 | 1'423 |
| Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ | 167 | 237 | 158 | 158 | 146 | 203 | 220 |

# ՀՀ 2017-2019թթ պետական բյուջեներ



# ՀՀ 2017-2019թթ պետական բյուջեի եկամուտները



# ՀՀ 2017-2019թթ պետական բյուջեների ծախսերն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ուղղությունների



# ՀՀ 2019թ պետական բյուջեի նախագծով նախատեսված արտաբյուջետային ծախսերն ըստ կատարող մարմինների (մլն դրամ)

| | |
|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | 27,952.4 |
| ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 337.0 |
| ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ | 6785.0 |
| ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ | 16,297.3 |
| ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 1,418.8 |
| ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 385.1 |
| ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ,ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵ | 781.2 |
| ՀՀ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ | 248.0 |
| ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | 1,700.0 |

# ՀՀ 2017-2019թթ պետական բյուջեի ծախսերն ըստ ծառայությունների խոշորացված խմբերի




| | 2017 թ. Փաստացի | 2018 թ. Ճշտված | 2019 թ. Նախագիծ |
|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | 1,504.8 | 1,515.7 | 1,642.2 |
| 1. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ | 691.7 | 663.1 | 761.3 |
| 2. Տնտեսական ծառայություններ | 147.5 | 170.0 | 162.3 |
| 3. Սոցիալական ծառայություններ | 642.6 | 650.7 | 707.5 |
| 4. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 23.0 | 31.9 | 11.1 |

# 1. Ընդհանուր նշանակության պետական ծառայությունների գծով ծախսեր



# 2. Տնտեսական ծառայությունների գծով ծախսեր



# 3. Սոցիալական ծառայությունների գծով ծախսեր



# Կառավարության պարտք

ՀՀ 2019թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն՝ 2019 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կկազմի 3,361 մլրդ դրամ (6,953 մլն ԱՄՆ դոլար) և 2018 թվականի տարեվերջի համեմատությամբ կաճի 225 մլրդ դրամով (466 մլն ԱՄՆ դոլարով):

| | Առ 31.12.2017թ. | Առ 31.12.2018թ. | Առ 31.12.2019թ. |
|---|---|---|---|
| ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ | 2,988 | 3,136 | 3,361 |
| ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար | 6,173 | 6,487 | 6,953 |
| ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի մեջ | 53.7 | 50.6 | 49.7 |

# Կառավարության պարտքի կառուցվածք (2)












# Կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշներ

**Հաշվի առնելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և կառավարության պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2019-2021 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2019թ. տարեվերջի դրությամբ կկազմեն.**

| | Ուղենիշ | 2019թ. (կանխ.) |
|---|---|---|
| **Վերաֆինանսավորման ռիսկ** | | |
| Մինչև մարում միջին ժամկետը | 8 – 11 տարի | 8.3 տարի |
| Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին) | առավելագույնը 20% | 13.7% |
| **Տոկոսադրույքի ռիսկ** | | |
| Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 80% | 84.1% |
| **Փոխարժեքի ռիսկ** | | |
| Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 20% | 21.7% |
| ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ | առնվազն 20% | 19.6% |

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

